«NEW GENERATION»
Humanitarian Non-Governmental Organization

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

Հայաստան, ք. Երևան

Օգոստոսի 15, 2018թ. NG-02-009-1808

Հայաստանի Հանրապետության
Ոստիկանության պետ, գնդապետ
Վալերիյ Օսիպյանին

Հարգելի պարոն Օսիպյան,

2018թ-ի օգոստոսի 14-ին ժամը 20:07-ին ՀՀ ոստիկանությունն իր պաշտոնական կայքում տեսանյութ և հայտարարություն է տեղադրել ՀՀ Ոստիկանությունում տեղի ունեցած դեպքի վերաբերյալ՝ դրանով խախտելով **անձանց անմեղության կանխավարկածը**:

Մասնավորապես, տեսանյութում և հայտարարության մեջ նշվում է.

- **Ոստիկանության օպերատիվ խումբը նշված տարածքում պարզեց, որ ըստ զանգահարողների հայտարարությունների՝ նրանք համասեռամոլներ են,**
- **Առաջին հայացքից կանայք, սակայն իրականում աղջկա զգեստներով տղամարդիկ ու նրանց համախոհները ներխուժեցին ոստիկանության բաժին,**
- **Պարզվել է ոստիկաններին մարմնական վնասվածք պատճառածների ինքնությունը՝ դավիթաշենցի, 21-ամյա Ժիրայր Հովհաննիսյան և երևանցի, 30-ամյա Մարատ Կիրիլյուկ:**

Ոստիկանության կողմից տեղադրված նյութը տարածվել է տարբեր ԶԼՄ-ների կողմից:

Արդյունքում խախտվել է ինչպես մի խումբ անձանց, այդ թվում՝ Ժիրայր Հովհաննիսյանի և Մարատ Կիրիլյուկի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, այնպես էլ վերջիններիս անմեղության կանխավարկածի սկզբունքը:

ՀՀ ոստիկանությունը շահագրգռված հասարակական կարծիք ձևավորելու մտքով, անտեսել է նախաքննության գաղտնիության պահպանման սկզբունքն ու հանրության ուշադրությանն է հանձնել այնպիսի փաստեր, որոնք խախտում են անմեղության կանխավարկածի սկզբունքը, իրենց բովանդակության մեջ պարունակում են վիրավորանքի և զրպարտության տարրեր և հանցագործության հատկանիշներ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածը սահմանում է, որ դատավարական գործողություններ կատարելիս առանց անհրաժեշտության **չպետք է հավաքվեն, պահվեն, օգտագործվեն և տարածվեն անձի մասնավոր կամ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություններ**, ինչպես նաև մասնավոր բնույթի այլ տվյալներ:

Մասնավոր կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիության խախտումն առաջ է բերում օրենքով սահմանված պատասխանատվություն, իսկ դրա հետևանքով անձին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ օրենքով սահմանված կարգով:

Մասնավորապես, **ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածը** պատասխանատվություն է նախատեսում մարդու անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելու, պահելու, օգտագործելու կամ տարածելու համար:

Իսկ **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը** սահմանում է պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները:

ՀՀ ոստիկանությունը պետք է ընդհանրապես չհրապարակեր մարդու անձնական տվյալները՝ անուն, ազգանուն, նկարներ, բնակության վայր, այլ միայն հաղորդեր հանցագործության դեպքի մասին:

ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածը սահմանում է անմեղության կանխավարկածը.

Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Անմեղության կանխավարկածը նախատեսված է նաև **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածով**, ըստ որի կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը:

Եթե նույնիսկ անձն ինքնախոստովանական ցուցմունքներ է տվել, ապա դա բավարար պայման չէ, որպեսզի անձին մեղադրեն հանցագործության մեջ: Միայն դատավարության փուլում դատավորը, միմյանց հետ համադրելով բոլոր ապացույցները, կարող է հանգել նման եզրակացության, ապացուցված համարել անձի մեղավորությունը կամ անմեղությունը:

Այսպիսով, ՀՀ ոստիկանության կողմից դեպքի վերաբերյալ հապճեպ տեղեկատվություն տրամադրելն առաջացրել է նաև մարդու արժանապատվության ոտնահարման և հավասարության սկզբունքի խախտման խնդիր:

Նշենք, որ սույն գործով մեղադրյալների պաշտպանությունը ստանձնելու համար «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից տրամադրվել է փաստաբան:

Հիմք ընդունելով վերոգրյալը,

ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքից հեռացնել համապատասխան տեսանյութը և հայտարարությունը,
2. Հրապարակայնորեն ներողություն խնդրել այն անձանցից, որոնց նկատմամբ խախտվել է անմեղության կանխավարկածն ու մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելության սկզբունքը,
3. Կարգապահական, ինչպես նաև քրեական պատասխանատվության ենթարկել ՀՀ ոստիկանության այն աշխատակիցներին, ովքեր պատասխանատու են եղել տեսանյութի և հայտարարության պատրաստման և տեղադրման համար:

Խնդրում ենք սույն գրության պատասխանը, ինչպես նաև Ձեր կողմից ձեռնարկված գործողությունների մասին տեղեկատվությունը մեզ ուղարկել գրավոր տարբերակով, պահպանելով օրենքով նախատեսված կարգն ու ժամկետները:

Հարգանքով՝

ՀԿ նախագահ **Սերգեյ Գաբրիելյան**

Կազմեց՝ ՆՍՀԿ իրավաբան
Անահիտ Մկրտչյանը
+374 60 47 89 89